ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«01» «10» 2025թ. N 05/6.1/01091-2025

«ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ՝ Դ. ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ
Էլ. հասցեն՝ aghabekyan.levon@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ
(Պայմանագրի միակողմանի լուծման մասին)

Հարգելի՛ պարոն Դանիելյան,

Արմավիրի մարզպետի աշխատակազմի և «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 2025 թվականի ապրիլի 30-ին կնքվել է N «ՀՀ ԱՄ-ԳՀԱՊՁԲ-25/03-2» պետական գնման պայմանագիր: Համաձայն պայմանագրի 8.5 և 8.15 կետերի՝ կողմերը պարտավորվում են կնքել համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ֆինանսական միջոցներ հատկացվելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում: Այսպիսով Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2025 թվականի հուլիսի 17-ի N 977-Ն որոշման համաձայն Արմավիրի մարզպետի աշխատակազմին տրամադրել է ֆինանսական միջոցներ, որից հետո Արմավիրի մարզպետի աշխատակազմի կողմից 2025 թվականի օգոստոսի 19-ին «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ծանուցել է համաձայնագրի նախագիծը, որը Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի 2-րդ մասի համաձայն պետք է կնքվեր 15 աշխատանքային օրվա ընթացքում, ինչը ՍՊԸ-ի կողմից չի իրականացվել: Ելնելով վերոգրյալից՝ Արմավիրի մարզպետի աշխատակազմը հիմք ընդունելով 2025

0901 ք. Արմավիր, Աբովյան 71, Հեռ.՝ /060/-90-10-10, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am, armavir.qartughar@gmail.com

թվականի ապրիլի 30-ին կնքած N «ՀՀ ԱՄ-ԳՀԱՊՁԲ-25/03-2» ծածկագրով գնման պայմանագրի 8.15 կետը, 2025 թվականի հոկտեմբերի 1-ից ամբողջությամբ և միակողմանի լուծում է վերոնշյալ պայմանագիրը և ընկերության շնորհված 2-րդ չափաբաժինը:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ վաճառողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ Հավելված 3.2 և Հավելված 4.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները 312750 (երեք հարյուր տասներկու հազար յոթ հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ (որակավորման ապահովում) և 208500 (երկու հարյուր ութ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ (պայմանագրի ապահովում) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետական՝ համապատասխանաբար 900008000698 և 900008000664 հաշվեհամարներին փոխանցելու նպատակով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը գնորդը կներկայացնի լիազոր մարմին:

Պայմանագիրը կհամարվի ամբողջությամբ լուծված գնորդի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Недействительная подпись

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ /060/-90-10-10, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am, armavir.qartughar@gmail.com

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
ֆինանսական վարչության ավագ մասնագետ՝
Անահիտ Պողոսյան
Հեռ.՝ /060/-90-10-10/023/